



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՒՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿՐՈՐԻ ՏԱՐԻ

ԶՄԻՒՌՆԻԱ ԸՆԴԱՐՈՒ 25 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1871

ԹԻՒ 919

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Վաղղիյ մէջ ազգային պահպան զօրաց զէնքը կառնուի և անոնց գնդերը կը լուծուին ըստ որոշման կառավարութեան, նմանապէս Վերմանիոյ հետ առևտրական դաշնագրութեան վերաբերեալ բանախօսութիւնները կը շարունակուին: Այս երկու գործողութիւններն ևս դիւրութեամբ և յաջողութեամբ կատարուելու վերայ են. բայց կերէի թէ կուսակցութիւնները իրենց բարոյական զէնքը ամենեւին թողուլ չեն ուզեր և երկպառակութիւնը երթալով կաւենայ վէրսային ազգային երեսփոխանական ժողովոյն մէջ:

Փարիզէն հետեւեալները կը գրեն:
Վախի մի օրէ ի վեր Պոնապարտեան դաւակցութեան խօսքեր պարտեցան փարիզի փողոցներուն մէջ և ոչ սակաւ լրագիրք նոյն լուրերը կրկնեցին. սա կայն ըստ հասարակաց կարծեաց՝ այս լուրերը անհիմն են: Ստոյգ է թէ տը Վալիֆէ զօրապետը իւր պաշտօնէն հանուեցաւ, բայց չեմ կարծեր թէ անոր ի պաշտօնէն անկումը քաղաքային պատճառաւ ըլլայ:

Միւս կողմանէ ձայն մի տարածուեցաւ թէ զինուորական մեծ պաշտօն վարող զօրապետ մի այս օրերս այցելութեան պիտի երթայ զհասկորոյս կայսեր: Այս այցելութեան լուրը անհիմն չէ, սակայն անոր մէջ դաւակցութեան նպատակ մի ամենեւին չկայ: Ահա ասիկա եղելութիւնը, զոր ստոյգ աղբիւրէ կիմանամք: Տուէյ զօրապետը՝ զոր կրնամք իւր անուամբը կոչել, ի լոնտոն յուղարկեցաւ հասարակապետութեան նախագահէն զինուորական կարեւոր պաշտօնի մի: Իւր մեկնէն յետոյ՝ զօրապետը անկեղծութիւն իմացուց մօտիւ թիւրին թէ՝ ի լոնտոն երթալով չէր կրնար՝ առանց պատշաճից օրինաց դէմ մեղադրուել ի տեսութիւն չերթալ անդ զհասկորոյս կայսեր, որոյ թիկնապահն եղած էր: Այս վեհանախական զգացումը՝ որ բոլորովին օտար էր ի քաղաքականութեան, ընդունելի եղաւ հասարակապետութեան նա-

խաղահին. որուն թողալուութեամբը Տուէյ զօրապետը այցելութիւն մի ըրաւ Վաղղիյն Նորդային:

Իրլանտան շատ նեղութիւն կը պատճառէ Մեղղիոյ պաշտօնէից խորհրդոյն և ինքնիստ կողմած խոռվա-յոյզ կուսակցութիւնը կը շարունակէ իւր յուզմունքը կոյրղիւրայն, որուն դէմ կառավարութիւնը պիտի պարտաւորի վերջապէս հզօր միջոցներ գործածել, հասարակաց անդորրութիւնը ապահովեցնելու համար:

Վերմանիոյ մէջ կրօնական շարժումը երթալով կը մեծնայ և կը տարածուի: Մուսիկն՝ որ Վալիերայի թաղաւորանիստ մայրաքաղաքն է, հակա-անսխալականաց Հոմը եղած է, ուր ամեն կողմէն կուգան կը ժողովուին աստուածային պաշտօններ մատուցանելու և վեճաբանելու համար ի վերայ կանոնաց և կարգադրութեանց հին կաթոլիկաց ժողովոյն, որ ըստ ամենայն երեւմանց՝ տեղի պիտի ունենայ ընդդէմ Վատիկանու վերջին ժողովոյն. ուր անսխալականութեան վարդապետութիւնը որոշուեցաւ: Կը հաւատեն թէ հին կաթոլիկներէն՝ այսինքն հակա-անսխալականներէն 20,000 հօդի աղբիւրային մի ստորագրեր և մատուցեր են գերմանական ազգային ժողովոյն (Իէի. խշթակ) յորմէ կը խնդրեն, որպէսզի շնորհ ընէ ինչ-սուսեան կրօնաւորաց կարգը շնջելու:

Վաղաքային մեծ գէպ մի տեղի ունեցաւ Աւստրիոյ մէջ Պոզէմիայի ազգային երեսփոխանական ժողովոյն գումարման սկիզբը, իրանչիսկոս—էնօսէի կայսեր տեղակալը թաղաւորական պատգամադիր մի կարգաց, որով Նորին Վեհափառութիւնը կը ճանաչէ և կընդունի Պոզէմիայի թաղաւորութեան իրաւունքը, յայտնելով թէ պատրաստ է թաղապետութեան սովորական երգումը ընել: Այդ ամեն մարդ զիտէ թէ Պոզէմիայի թաղաւորութեան այժմեան իրաւունքը, չեն կրնար լինել միւսոյն իրաւունքը զորս կը վայելէր երբեմն. ուստի հարկ է որոշել զանոնք ոչ միայն համաձայնութիւն մի հաստատելով Պոզէմիայի ազգային երեսփոխանական ժողովոյն և կայսեր մէջ,

այլ և աշխատելով անմաս պահել աւստրիական միապետութեան հիմնական օրէնքը և զպարտաւորութիւնները՝ որք 1867ին դաշնագրեցան Հունգարիայի թաղաւորութեան նկատմամբ, Վալսըր յատկապէս այս դիտողութիւնները կընէ՝ խնդրելով Պոզէմիայի երեսփոխանական ժողովէն «չափաւորութեամբ և խաղաղապետութեամբ խորհիլ և խորհրդակցիլ ի վերայ եղանակին՝ զոր պէտք ընդունիլ առ ի սահմանել զքաղաքային կացութիւնը Պոզէմիայի, և վերջացնելու համար՝ առանց փաստ հասցնելու Աւստրիոյ միւս թաղաւորութեանց և նահանգաց իրաւանց, սահմանադրական վէճ մի որոյ երկարաձգութիւնը սպառնական է աւստրիական միապետութեան բարօրութեանը»:

Ինչդէրսպով ինչ հետեւեալը կը գրեն գերմանական օրագրի մը:

«Չեմ կրնար զրուցել ձեզ թէ Ռուսիոյ կայսերան կան դահին ժառանգ իշխանին՝ Վաղղիոյ դեսպան Լեֆֆը զօրապետին հետ ունեցած յարաբերութիւններն նոյնչափ մտերիմ են, որչափ որ կըսուի Վարձեալ չեմ գիտեր թէ արդեօք ստոյգ է, ինչպէս որ ըսին, թէ բարձրապատիւ ժառանգ իշխանը իւր հօրը յանդիմանութիւնները իւր վերայ հրաւիրեր է առ յիշեալ զօրապետն ուղղած քանի մը խօսքերու համար, որ ապառնի Չարին բերանը՝ իբր երկայնի սուր մընէ: Այս բաներուն վերայ ստոյգ տեղեկութիւններ չեմ կրնար տալ. սակայն կրնամ ապահովեցնել զձեզ թէ բարձրապատիւ ժառանգ իշխանին քաղաքային ընթացքը ոչ միայն զկայսրը վշտացուց, այլև զդեսպանները քանի մը օտար տեղութեանց, որք հարցուցին Վորդաքոֆ իշխանին թէ՝ Չարին իւր որդւոյն վերայ ունեցած ազդեցութիւնը այնչափ զօրաւոր չէ, որ կարող լինի պարտաւորել զնա խորշիլ այս անվայել ցոյցէն, որով կը մաքաւի իւր հօրը արտաքին քաղաքականութեան դէմ:

«Օգոստոսի առ կայսրը և մասնաւորապէս Վորդաքոֆ իշխանը՝ յորմէ հետէ որ Աւստրիոյ և Վերմա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ՍՈՒՐԻ ՏԵՂԵՍՑ ԽՆԴԻՐԸ
(Երանանկարիւն) (1)

Երեք աւուր յետոյ՝ նամակ մը ստացաւ սրբազան Պատրիարքն Վալի փառալի հրամանաւ գրուած, որով լուր կուտար թէ, Սիօն լեռան վրայ Հայոց ազգին գերեզմանատան վերաբերեալ բոլոր թղթերն հետն առնելով՝ Յունաց վանքը բարեհաճի երթալ այս ինչ ժամուն: Ահա անկեղծ ժամանակին գնաց Ս. Պատրիարքն առանց թուղթ մի հետը տանելու: Հոն գտաւ նաև Վալատիոսի Չաղղիոյ Պ. Հիւպատոսն փոխմ. Վալի փառալի և Միսիկի Գիւնտիին հետ: Զինի սովորական խօսակցութեան, ըսաւ Նորին Վալատիութիւնը, «Բաթրիք է ֆէնտի, ինչպէս անցեալ օր յատկապէս խնդրեցիք, թէ քանի որ սուրբ քաղաքս եմք, Սիօն լեռան վրայ ձեր և լատինաց մէջ եղած գերեզմանատան վէճն ալ նայինք, և մենք ձեր խնդրանաց զիջանելով խօսք տուած էինք երկու կամ երեք աւուր յետոյ լուր տալու, ահա այսօր ձեզ լուր տրուեցաւ որ նոյն տեղի վերաբերեալ բոլոր թղթերը տունէք գայք. ահա Պ. Հիւպատոսն ալ հոս ներկայ է լատինաց կողմէն. ուրեմն հաճեցէք ձեր նոյն տեղեկաց վերաբերեալ թղթերը հանել որ տեսնեմք թէ ինչ են, և ձեր մէջը ծագած անհամաձայնութեան պատճառը ինչ է»:

Ետեղած թղթերը չբերի, ըսաւ Ս. Պատրիարքն. և լատինաց հետ ալ մեր ունեցած անհամաձայնութեան պատճառը որիչ բան չէ, միայն մեր իրաւանց յափը-տակութիւնն է լատինաց կողմէն, որում կընպաստէ

տեղութեան կողմէն եղած թողալուութիւնները, զոր անցեալ օր մի ըստ միովէ պատմուցի ձեր Վալատիութեան, զորս կրկնել աւելորդ կը համարիմ:

«Ինչո՞ւ համար չբերիք ձեր թղթերը և պատճառը ինչ է, ըսաւ Նորին Վալատիութիւն. հապա ինչպէս դատ պիտի վարէք, քանի որ ձեռքերնիդ անոր վերաբերեալ թղթեր չունիք. ըսել է թէ դատերնիդ պիտի կորսնցնէք և մենք ի զուր պիտի հուշիմք»:

«Հարկ չտեսայ, ըսաւ սրբազան Պատրիարքը, երբէք թուղթ չունենալ ձեռքերնիդ ինքզինքն նոյն տեղեկաց վերաբերեալ: Մեծազօր Տրութեան չնորհիւր ոչ մեր դատը պիտի կորսնցնենք, որ ամենայայտնի իրաւունքնիս է, և ոչ ալ ձեր Վալատիութեան ի զուր տեղը հոգնութիւն պիտի տամք, քան լիցի. միայն խնդրեմ, վսեմա. Տէր, խնդրեմ առկին անդին չմտաւոր օտար խնդիրներ մէջ բերելով, ինչպէս որ քանիցս անգամ տեսաք Ֆրանչիսկանց ըրած շարժումները. և այս խնդրոյս մէջ անոնց ըրածը այնքան յայտնի անիրաւութիւն է, ինչպէս վերը փորը ինչ յիշուեցաւ, որուն համար այսօր եթէ մենք չբողոքենք, ի վաղի քարինք պիտի աղաղակեն, ինչպէս յայտնի տեսաք Ս. Յակովբայ, քառասնից Ս. Ալբին և սուրբ Թինդեան տեղեկացն և ուրիշ խնդիրներուն մէջ, նոյնպէս այս գերեզմանատան խնդրոյն մէջ Ֆրանչիսկանք զմեզ յանձնարին վշտացուցած են և կը վշտացնեն միշտ: Այս իրաւունքը այնքան արդար ու ճշմարիտ է որ՝ ուրանալու համար մարդ առանց խղի ըլլալու է: Ի հարկէ կը յիշէք, վսեմափայլ Տէր, անցեալ օր այս գործը իմ հետս դատ վարելու պաշտօն ունեցող Պ. Հիւպատոսին յանձնեցի իմ կողմէն ձեր Վալատիութեան ներկայութեանը, և ըսի թէ՝ ես ձեր հետը չպիտի գամ, դուք առանձինն օր մը Պ. Հիւպատոսն ալ հետեւնիդ առնելով այցելութեան ելէք դռնէ

ձեր հարազատ հպատակ Հայոց ազգին սեպհականութեան բռնաբարութիւնը տեսնելու համար, ուր լատինք հիւսիսակողմը թաղաւորական արդար սրդոտայ ունենալով, որ աւելի յարմար, աւելի մօտ և աւելի զիւրին է իրենց, անկէց դուռ չբանալով, անիրաւաբար՝ չասացից թէ լոնի, և այն երկու դուռը մէկ տեղ բանալով՝ մեր սեպհական գերեզմանատան վրայ, զմեզ միշտ ոտքի տակ առած են, և միշտ մեր գերեզմանատան մէջէն ձանապարհ ընելով՝ մեր իրաւանց վնաս տալ և ի՞նչացնել է մարերնին անշուշտ:

«Այլ լաւ չէ՞ր ըլլար, ըսաւ վսեմա. Վալի փառալն եթէ նոյն տեղին վերաբերեալ թղթեր ունիք, հետեւնիդ բերած ըլլայիք. բայց և այնպէս դուք ձեզնի կըսէք թէ՝ երբէք նոյն տեղին վերաբերեալ թղթեր բերելու հարկ չկայ, և կամ երբէք թուղթ չունեցող կը ձեռք զմեզ, ապա ինչ բանի վրայ հիմնելով դատ վարել կուզէք. ուրեմն ձեր իրաւունքը ինչո՞վ պիտի պաշտպանէք»:

«Նախ ձեր Վալատիութեան ներկայութեան կողմէ իմանալ թէ այս գործին համար Ֆրանչիսկանք ինչ կըսեն, և ինչ կուզեն, պատասխանեց սրբազան Պատրիարքն. ինչ որ կուզեն անոր համեմատ սկսինք խօսիլ: Մենք մեր իրաւունքը հաստատելու և Ֆրանչիսկանց ըրածը բողոքովն բռնաբարութիւն ըլլալը յայտնելու համար ամենայայտնի փաստեր ունիմք յառաջ բերելու, որոնք ձեր Վալատիութեան ուղած կառավարութիւն տը կար փաստեր չեն, և կը յուսամ որ նոյն փաստերով հաստատելէս զկին, չէք ստիպել զմեզ նորէն նոյն գերեզմանատան վերաբերեալ թուղթեր բերելու ի յաւ ձեր Վալատիութեան գլխոյն: Ուրեմն, վսեմ. Տէր, չնորհք երբէք մեզ յայտնելու լատինաց նոյն խնդիրը՝ ձեր Վալատիութեան բերնով, որ ըստ այնմ խօսեցուք»:

Նախ, ըսաւ Նորին Վալատիութիւնը, Ֆրանչիսկանք

(1) Տես լրագրոյս 902—904, 906, 907, 909, 912, 913, 914, 915 բիւրքը:

նորոյ կայսերք իրարու հետ տեսնուեցան իշւ քաղաքին մէջ և զկնի խորհրդակցութեանց որ տեղի ունեցան ի կասկէյն, ամենայն խնամօք հոգ տարին անհաշարտութեան ստուերն անկամ չցուցնելու։ Ընդհակառակն յաջողութիւն բարեմաղթեցին կասկէյնի խորհրդակցութեանց։ Բայց մինչդեռ Չարը և իւր կառավարութիւնը ի գործ կը դնէին այս չեղարկութիւնը, դատաւարանդ իշխանը անպակաս իւր պալատը կը հրաւիրէր զերմանական կայսրութիւն ամենածանօթ հակառակորդները և անոնց հետ կը տեսնուէր։

— Ինչդէրսպարիկէն գրուած ուրիշ նամակ մի ևս կը ծանուցանէ թէ Վերդաքոն իշխանը հրաւիրէր է զՌուսաց զեսպանը Պէրլինի, որպէսզի իմացնէ իրուսիոյ կառավարութեանը թէ բոլորովին սուտ և անհիմն են տարածուած լուրերն ի մասին ընթացքին Ռուսիոյ գահաժառանգ իշխանին ընդդէմ Ռուսիոյ և թէ Վերդին կայսերական խորհրդութիւնը՝ ոչ խօսքով և ոչ գործքով, պատճառ մը չէ տուած ենթադրելու թէ իւր քաղաքային տեսութիւնը չէ ստորաւարդած կայսեր քաղաքականութեանը։

Յիշեալ նամակը կը յաւեցնէ թէ գահաժառանգ իշխանին մարդասէր և լաւակամ ընդունելութիւնը՝ որով պատուեց զզեսպանն Վարդիոյ, ամենէն չիրնար իրեւ ընդդէմութեան գործ մի համարուիլ։

— Օրով կոմսին՝ Ռուսիոյ զեսպան կարգուիլը ի փարիշ հաւաստի կերէի։ Բայց շատ հաւանական է որ յիշեալ կոմսը հազիւ թէ 1—2 ամիսէն պիտի կրնայ ի փարիշ իւր պաշտօնը վարելու երթալ։

Յայտնի է թէ Նիկիտայի ազգային(1) երեսփոխանական ժողովոյն որոշմամբ և փոխարքային վաւերացումով Վահրէ, Ալեքսանդրի, Տիմաթ և Ռոզէթ քաղաքները յետ այսորիկ ազատ պիտի ըլլան անձնական հարկէն, սակայն անոր փոխարէն մասնաւոր տուրք պիտի առնուի ուտելու ամեն բաներէն, որ Նիկիտայի կիւլին ու տեղական սպառման սահմանեալ են։ Այս տնօրէնութիւնը օտար տէրութիւնց երեսփոխանաց ծանուցանելու համար, եղիպտական իշխանութեան արտաքին գործոց պաշտօնայ վսեմա՝ Վուպար փաշան երկար ջրջաբերական մի յուզարկեց Ալեքսանդրի-ընդհանուր հիւպատոսայ։ Այս ջրջաբերականէն հետեւալ կարոնները կը քաղեմք։

(1) Չըլլայ քի ընթերցողը ազգային բառը տեսնելով՝ Հայոց ազգին երեսփոխանական ժողովը իմանայ քեպետեմէնտեալ խօսքերէն շատով կը հասկցուի քի Հայոց ժողովոյն վրայօք քի խնդիրը։

Կրտսէն թէ, նոյն գերեզմանատունն որ այժմ ձեր ձեռքն է, ձեր սեպհականութիւնը չէ։

«Երկրորդ, թէ՛ ձեր և թէ՛ Յունաց գերեզմանատան մէջէն միշտ անցողաբար կընեն եղեր իրենց սպտերը դեռ չբաշտած անարգել, և դուք սպ չէք արգիլել եղեր, ոյր վասն իրաւունք ունեցած են դուռ ալ ձգելու անկից։

«Երրորդ, նոյն ձեր գերեզմանատան մէջէն քարիք—իլ ամ արգելի ճանապարհ կայ եղեր, որ օրինաւոր ճանապարհ ըլլալուն համար՝ իրենց դուռը այն կողմէն ձգւած են որ դուրսէն իրենց քարէն զանաւորեալ հոն ուխտատեղի մը ալ կայ եղեր, նոյն տեղին ալ երթալու համար ձեր գերեզմանատան վրայ դուռ ձգելու համար ձեռքով են և ահա լատինաց ըստծը ասոնք են։ Հիմա դուք ձեր կողմէն այս երեք կտոր խնդիրներուն վրայօք ինչ որ ունիք դուք ալ խօսեցէք։

«Վսեմա. Տեառք, ըսաւ սրբազան Պատրիարք, նախ կին կըտորին պատասխանելով՝ կրտսէ՛ որ՝ նոյն գերեզմանատունը Հայոց ազգին սեպհական իրաւունքն է. ոչ թէ միայն մեր գերեզմանատունը մերն է, այլ իրենց այժմեան գերեզմանատունն անգամամբողջ Հայոց ազգինն է, և իրենք Հայոց ազգէն յափշտակած են. որով մէկ մասը ի նշան բարեկամութեան նուիրած են մեր նախնիները իրենց մեռելները թաղելու համար, երբ տակաւին Սիօն լեռան վրայ տեղ չունէին. իսկ մնացեալ մասը ասկէ իր մէկ դար առաջ(1) բուռն զօրութեամբ

(1) 1774 բռնոյն Պոզոս Պատրիարքի ժամանակ լատինք Պոլսոյ Գաղղիոյ գեապանին վստահելով ոտք ելած են բռնութեամբ իսկ Հայոց գերեզմանատունէն մաս մի. իրաւունք մէջ բերելով՝ քի անկէ իբր 120 տարի յառաջ, այսինքն Փրկչի 1654 բռնոյն սուրբ Աթոռոյ մէկ փոխանորդը սէնթով իրենց ծախած է 150 զօլարայի. բայց այն ժամանակին կարօտութիւն

Մեծարդոյ ընդհանուր հիւպատոս

Նիկիտայի կողմէն կարգեալ երեսփոխանաց որոշմամբ, որ փոխարքայական մասնաւոր խորհրդոյն մէջ քննուեցաւ և վաւերացաւ ի բարձրա. խորհրդէն, հետեւեալ տնօրէնութիւնները ի գործ դրուեցան։

Վահրէ, Ալեքսանդրի, Տիմաթ և Ռոզէթ քաղաքները անձնական հարկէ ազատ պիտի ըլլան. սակայն անոր փոխարէն մասնաւոր տուրք մի պիտի առնուի ուտելու վերաբերեալ ամեն բաներէն. որք Նիկիտայի երկրէն կիւլին և տեղական սպառման սահմանեալ են։ Այս ուտելու բաները՝ որոց վերայ արդէն տուրք դրուած են՝ միւսնոյն հարկայ ենթակայ մնալով միշտ, մասնաւոր նոք տուրքը պիտի վերաբերին հետեւեալ պարէնից, որք են

Յորեն, եղիպտացորեն թէ՛ հատով և թէ՛ ալիւր եղած, բակլա, դարի, բրինձ, ոսպն (մէրձիմէք), լուրիա, ֆէրիք (խորոված ցորեն), սիսեռն (նոհատ) անիսոն, սամիթ (շամար), չոր պէօրիւրձէ, գինձ (քիշնիշ) և այլն։

Այլ և թուրքեր, շնգիկահաւեր, Նիկիտայի հաւեր, շնգիկատանի հաւեր, սպ, աղաւնի, նապաստակ, ճագար կամ գետնափոր նապաստակ, բադ (էօրտէք) ընտանի և վայրի, նախապէս հաւկիթ։

Միայն տուրքը հարկերն 9 պիտի ըլլայ՝ զնահաւորութեան վերայ, որ երեք ամիսէ երեք ամիս պիտի ստուգուի և պիտի հաստատուի քաղաքապետութեան (իշթիսպայի) վարչութեան կողմէն։

Սակայն ցորենը և եղիպտացորենը՝ իւրաքանչիւր արտէպին հարկերն 5 պիտի վճարեն, ինչպէս նաև անոնց ալիւրը։ Իսկ իւղալից սերմերը առաջուան պէս պիտի վճարեն իրենց սովորական տուրքը։

Վերդիշեալ հարկերը պիտի առնուին ուտելիք բաներէն որ պիտի հասնին ցամաքի և ծովու ճանապարհաւ, և որոնք սահմանեալ են թէ՛ հասարակաց սպառման և թէ՛ ընդունողին պիտոյիցը համար։

Այս տնօրէնութիւնները ի գործ պիտի դրուին, Մեծարդոյ ընդհանուր հիւպատոս, 31 օր զինի հրատարակութեան ներկայ շրջաբերականին. հետեւաբար մինչև այն պայմանաժամուն հասնելը, հին սովորութիւնը պիտի շարունակուի ի մասին տրոց։

Հաճեսցէ Մեծա. Տէր, այս տնօրէնութիւնները ըստ արժանւոյն ծանուցանել ձեր վարչութեան ներքեւ զտնտեսանայ, որպէս զի անոնց գործադրութիւնը ապահովուին ըստ ժամանակին...

Ըստաքին գործոց պաշտօնայ, (Ստորագրեալ) ՆՈՒՊԱՐ

Դարձեալ յախտակած են լատինք մեր սեփական տեղին, զոր այժմ ձեր Վսեմութիւնը եթէ տեսնելու ըլլայ, անշուշտ պիտի ըսէք թէ նոյն լատինաց գերեզմանատունն ամբողջ Հայոց գերեզմանատան մէկ կտորն է. ուրեմն ինչպէս առանց պատկառելու լատինք մեր մնացեալ մասին համար կը համարձակին ըսելու թէ նոյն սեպհականութիւնը Հայոցը չէր։

Վսեմախալ Վալի փաշան ըսաւ. «Դու ըսաւ. ուրեմն ինչո՞ւ համար ձեր թղթերը չբերէք որ՝ ձեր իրաւունքն իսկոյն յայտնուի, որով անոնց ալ խօսելու առիթ չմիար և դուք ալ կաղատեք այսպիսի զխաբարութենէ մը։

«Տէր իմ, ըսաւ սրբազան Պատրիարքը, սուրբ Յովնայ խնդիրը յուզուած ատենը կը լինէր անշուշտ, որ ոչ թէ միայն թղթեր, այլ և մեծամեծ հին և նոր հրովարտանքներ անգամ տեսնուելէ զինի՝ Դարձեալ Չէր

չունենալով, չեն տիրած այն մասին, եւ հիմակ կըսէին, այն տեղը կը պահանջէք իրաւամբ վաճառման։ Եւ քեպետ Հայոց միաբանութիւնը ի բռնութեան գօրաւորին ստիպեալ սիրով յանձն առնէր և տեղ մի տալու. լատինաց իրենց գերեզմանատան արեւմտեան կողմէն եւ ոչ անոնց պահանջած մասը, որ Հայ քաղաքացոց սեփական գերեզմանոցն է, այսոս ամենայնիւ չեն կրցած բռնութեամբ իսկ զայն մինչեւ 1774 տարին, յորում Դամայ Վալի Հատըմօղլուն Մեծմիս փաշան տեղիք ելած ըլլալով եւ սուրբ քաղաքս գալով, լատինք կը զիջէին անոր եւ անոր ջախքանց ազատութիւնը կը շարունակէր իր յաջորդին ուզած տեղերին անոր ձեռքը գրաւել. եւ քեպետ Յովնայիմատրիարք բողոքած է Բարձրագոյն Դուռը, բայց նորա բողոքը այս անգամուն մնաց լսելի եղած քի ի ցաւ սրտի բովանդակ ազգիս։

ԱԶԳԱՅԻՆ

Հետեւեալ յօդուածը՝ զոր Ս. Եղիշեանայ Արարապամագրոյն Մայիսի տետրակէն կը քաղեմք, մեր ընթերցողաց ծանր ուշադրութեանը արժանի կը համարուիմք. քանզի վեհա. տէր Գեորգ Գ. սրբազնազոյն կաթողիկոսին ազգասիրական զխաւոր տնօրէնութիւնն ներէն մին կը համարուի։

ԳՈՅԲ ԿՈՒՍԱԿՐՈՆ ՀՈԳԵԴՈՐԱԿԱՆԱՅ

Արդէն յայտնի է որ ի 1836 թուականին հաստատեալ կանոնադրութեամբ՝ Ռուսաստանի Հայոց կուսակոսն հոգևորականաց ղեկին մահուան եւ թէ չունենային կտակ, կը մնային յօդուտ և ի ժառանգութիւն ազգականացն, որով մեծ փաստ և զրկանք կը կրէին թէ մայր Աթոռ և թէ՛ Վսեմաք։

Ո՛վ չը իտէր թէ հոգևորականաց ունեցած բոլոր ստացուածքը դրեթէ եկեղեցիէն և զայն կաղմոյ ժողովուրդէն է. ո՛վ չը իտէր, զի ի հնումն ժողովուրդէն համոզուած լինելով՝ թէ զոր ինչ նուիրեն փանակաւ, նոց և բարձրատիճան եկեղեցականաց, մեծաւ մասամբ աստուածահաճոյ և ազգայնու ձեռնարկութեց կը զործածուին՝ և ըստ որում անորիք՝ զինի մահուան անշուշտ կը մնան յօդուտ վանօրէից, որով մեծ կերպ պիւ մտած և ի ջերմեռանդութեամբ կը մատուցանէին իրենց հոգևոր տուրքերը։ Բայց մի ժամանակէ հետէ մնալով ժողովուրդին ազգականացն՝ ոչ միայն հանդուցեց զոյքը՝ այլ և երբեմն ի ժողովուրդոց նուիրեալ արգիւնքներ որ վասն բարեպաշտական շնորհածոց, և կամ յարգեանցն յանուն մայր Աթոռոյ քաղաքի ի նոցանէ, յետ անակնկալ կամ յանկարծահաս վախճանի նոցին՝ ըստ զօրութեան յիշեալ կանոնադրութեանն՝ անխիղճ ազգականացն որս կը լինէր յանրաւի, որք իբրեւ օրինաւոր ժառանգք կը քանդէին և ամեն միջոց կը հնարէին ի դատաստանատեղիս յաղագս ի ձեռս բերելոյ զայնոսիկ՝ ի ցաւ սրտի ամեն ճշմարիտ ազգասէր եկեղեցականաց և աշխարհականաց հետեւաբար ժողովուրդն օր քան զօր կը ստանանայր յառատ տուրս կուսակոսն եկեղեցականաց։

Ուստի նորին Ս. (Ժողովին կաթողիկոս Տ. Տ. Գեորգ Գ. զինի օժման ի Հայրապետութիւն ամենայն Հայոց՝ տալով զանձն օրինակ, առաջարկեց Միաբանութեան մայր վանուցս, և նոքա մի ուխտ պայմանի ստորագրեցին յօժարութեամբ, որ հրատարակեալ է Արարապամագրոյ Ա. շրջանի Մայիս ամագրոյ մէջ։ Եւ ապա՝ կաթողիկոսաց և ամենայն կուսակոսն եկեղեցականաց յետ վախճանի ի գործ դրուելիք երկու յօդուածները փոխելոյ աղագաւ առաջարկեց՝ և օգոստ

պատուական զլուրը այնքան ցաւուցին, և իրենց նօ՝ նօ՝ նօ՝ երբեք մեղմանընէ չուզեցին. ուրեմն ինչ հարկ կայ ինձ այսօր թուղթ բերելու և խօսելու և աշխատելու իմ սեպհականութիւնս ըլլալը ապացուցանելու համար, քանի որ անոնք ուրիշին իրաւունքը ճանչնալ չեն ուզեր. ուրեմն թող իրենք ապացուցանեն նոյն գերեզմանատան մերը չըլլալը իմէ կրնան։

«Վսեմա. Տէր, նոյն գերեզմանատան վերաբերեալ թղթերը կուղծեմ մեղմ, ինչ հարկ կայ զանոնք ցուցնել, քանի որ նոյն գերեզմանատան մէջ գերեզմանաքաւ բերուն ամեն մէկը մէկ մէկ թուղթ, մէկ մէկ կրովարտակ և մէկ մէկ կալուածադիր են, անգոյք քարերը անգամ իրենց վրայի հին և նոր տապանադրերով ինքնին կը վկայեն թէ նոյն գերեզմանատունն իսկ Հայոց սեպհականութիւնն է. եթէ Յրանչիսկեանք այսպէս յայտ յանդիման երեւած Հայոց ազգին արդար իրաւունքն չտեսնեն, նոյն քարերը լեզուի ելելով պիտի աղաղակեն Ահա անոնց այսպէս անիրաւ վարմունքին համար է, որ արժան չտեսայ այս խնդրոյ վերաբերեալ գրեթէ հետս բերելու, վսեմա. Տէր, ապա թէ ոչ՝ չկարծեք որ Հայոց ազգը առանց օրինաւոր կալուածադրեր ունենալու տիրած է տնոր, քաւ լիցի։

«Ձեր ըսած խօսքերէն սուսն մասը բաւական իմացուցաւ. և համարէ թէ կիսով չար լուծուեցաւ խնդիրը, ըսաւ վսեմա. Վալի փաշան, ուրեմն երկրորդ մասին վրայօք ինչ ունիք ըսելու. լատինաց, որոնք կընեն թէ գերեզմանատան պատը դեռ չբաշտած՝ ձեր գերեզմանատան մէջէն կուզան կերթալ եղեր անարգել. և դուք ալ երբեք արգելած չէք եղեր. ոյր վասն անոնք ալ նոյն իրաւամբ համարձակել են դուռ ձգելու, զոր դուք հիմա արգիլել կուղծեք. ուստի քանի որ այս այսպէս է, իրենց իրաւունքն է, և դուք արգիլելու իրաւունք չէք ունենար—ըսելով՝ Նորին Վսեմութիւնը քովէն ծրարտեմ

առաջին կայսրն ամենայն իրենց հաճեցաւ ընդունել սրբազնագոյն Հայրապետին առաջարկութիւնը և կայսերական հրովարտակաւ (ընդհատութիւն) 1015-16 յօդուածները փոխեցան, զորոց օրինակն ահաւասիկ կը հրատարակեմք ի տեղեկութիւն։

Յօդ. 1015. Օգնի վախճանի Պատրիարք կաթողիկոսաց ամենայն Հայոց և Թեմակալ Լեւոնորդաց եկեղեցւոյ Հայոց և փոխանորդաց նոցա և Եթէ չունենին նոքա արարեալ զկտակ յօդուած աստուածահաւոյ շինուածոց, զոյք նոցա համարին տեղահանուիլն վանիցն Լեւոնորդի. հակողութիւն ի վերայ յայսիսի գոյից յանձն լինի հոգեւոր տեսչութեանց։

Յօդ. 1016. Պայք մնացեալք յետ վախճանի խնայարց, մայրապետաց վանորէից Հայոց և առհաւարակ կուսակոթն հոգեւորականութեան, մեան յօդուածին մեծաւորանի, որոյ ի կարգի միաբանութեան զըտանիցին նոքա, եթէ չիցէ նոցա արարեալ զկտակաւանդութիւն յօդուած աստուածահաճոյ շինուածոց։

ՏՕՐԱ

Որովմաք 224 երեսէ բաղկացեալ ժամանակակից ազգային սիրահարական վէպ մըն է, շարադրեալ Խաչատուրեանի կողմէն պատուելի պարոն Լեւոնի Սիրճա, Վ. միւսնայի ուսումնական երիտասարդի և հրապարակեալ ի տպարանի Տէմեան եղբայր քաղաքիս։

Լայս պատուական դործոյն աշխարհաբար մաքուր լեզուն, վայելելու ու քաղցր շարադրութիւնը և անոր բարոյական գեղեցիկ իմաստները կատարելապէս հասնալու համար՝ պէտք է ծայրէ ի ծայր ուշադրութեամբ կարդալ զյիշեալ աշխատասիրութիւնը՝ որ մեծ պատիւ կընէ հեղինակին, ինչպէս նաև Խաչատուրի հայազգի գրողիտաց դասուն։

Կը յորդորեմք գլխաւորները, երիտասարդները՝ նմանապէս զծաղեկահասակ օրիորդները, օգուտ քաղել այս սիրահարական վէպին ընթերցումէն։ Որուն տաղանդաւոր հեղինակը՝ հաճելին օգտակարին հետ խոսնուած օրինակներով՝ յառաջ կը բերէ զաղէտալի հետեւութիւնները որք դժբաղդաբար կը ծագին անհիմն խոստումներէ և անտեղի ակնկալութիւններէ զոր երիտասարդք ունենէ՝ առժամանակեայ զգոսանաց պատճառաւ, անխղճաբար կուտան անփորձ օրիորդաց, կամ լաւ ևս է ըսել կը խաբեն զանոնք։ Հայկազուն օրիորդներն ևս կրնան մեծ օգուտ քաղել այս ժամանակակից վէպէն ուշադիր ընթերցումէն։ Որ պիտի զգուշցնէ զերեքը շուտով չնաբուիլ պէճասէր և մոլի երիտասարդաց կամ պատանեկաց յուսատու և քաղաքավարական խօսքերէն և չընդունել իբրեւ ճշմարտութիւն մը տեսնելով բացաւ և հաւ նոյն տեղոյն ճիշդ յատակագիծն ալ չիսկ տուած են Լատինք, որու վրայ մեր ուշադրութիւնը կը հրաւիրեմք, ըսաւ Պատրիարքին։

Այս, ըսաւ սրբազան Պատրիարքն, այդ այդպէս է, բայց ճշմարտ է, այլ ճշմարտաման է ըսածին։ Բայց և այնպէս նոյն աստուածները բաւական բացատրութեան կարօտ են։ Երբ վասն իսկ մեր Վսեմութեան ներքին լուրջամտութիւնն ինքզինով բացատրեմք, Տէրաբիմ, թէ ինչպէս է ըսելով իրեն քաշել տուած նոյն գերեզմանատան յատակագիծն Նորին Վսեմութեան ներքին ացնելով, որ յար արդէն ի ստորաստի ունէր իրեն հետ, ըսաւ և Սյո՝ քանի որ Լատինք իրենց գերեզմանատան դեռ պատ չէին քաշած, ինչպէս Հայոց և Յունաց գերեզմանատուներն այժմ աչքերնուս զիմացն է, նոյնպէս Լատինաց գերեզմանատուներն ևս կոխան դոյնց էր հասարակաց և անասնոց անգամ արածեալ տեղի և այնպէս մենք և Յոյնք Լատինաց անց ու դարձ մեր գերեզմանատան մէջն արգիլած չէինք և չէինք ալ արգիլել քանի որ երեք ազգաց գերեզմաններն ալ մի և նոյն անարդուութեան մէջ էր և ամեն կողմէն ճանապարհ եղած էր։ Նոյնպէս ալ Լատինք ոչ մեր և ոչ Յունաց անցու դարձ արգիլած էին իրենց գերեզմանատան մէջն և ոչ ալ կրնային արգիլել, որովհետեւ միայն սահմանաքաղ իրով որոշուած էին իրարմէ։ Այլ Լատինք երբ իրենց գերեզմանատան պատը քաշեցին, որով կերպիւ իւր արգիլեցին իրենց գերեզմանատուներն Հայոց և Յունաց անցու դարձ, և իրենց տեղը աստուածուցեցին նաև անանց արածեալք ըլլալէ, որու վրայ ուրախ եմք և ոչ ինչ ունիմք ասելիք։

Այլ միայն սա է մեր փնտած իրաւունքը, քանի որ իրենց գերեզմանատուներ իրենց համար (մեղադատեալ) սուրբ է, նոյնպէս է մեր ինքներն ալ ինչպէս

մարտութիւն անոնց խօսքերը։ Դադարահասակ օրիորդները՝ առանց վատահասակ իրենց դատողութեանը և իրենց սրտին համակրութեանը, ակա՛նջ գնելու են իրենց մօրը և հօրը խրատուցը, որք երբեք իրենց սիրելի գաւառաց երջանկութեանը արգելք ըլլալ չեն ուզել։ Ընդհակառակն ամեն կարելի զոգողութիւնները կընեն անոնց բարօրութիւնը ձեռք բերելու համար։

Լայս սիրահարական վէպին գեղեցիկ Տօրան՝ եթէ իւր մօրը խրատուցը ականջ կախելու ըլլար, տարակոյս չկայ թէ պիտի չթողար որ իւր սրտին խորը արմատանայ այն թուեալից խարբախ սէրը, որուն մահադիմ, ազգեցութեանը զոհ գնաց ի կսկիւն պատիւի դժբաղդ ծնողացը։

Յիշեալ գիրքը կը ծախուի ի դին 20 դրուով։

Կ. Պօլսոյ Մահալ հանդիսին Սեպտ. 11 թիւէն քաղելով արժան համարեցինք երկու յօդուած մի հրատարակել Լեւոնորդի ներկայ թուոյն մէջ ի տեղեկութիւն մեր հեռաւոր ընթերցողաց։ Որոնք նոյն յօդուածոյն ընթերցումէն պիտի իմանան թէ ինչ ինչ և անիշխանական վեճակի մէջ կը գտնուի Կ. Պօլսոյ Պատրիարքարանը, որ ազգային կեդրոնական վարչութիւնը կը համարուի։

Սրբազան Հայրիկը մօտեւս եկեղեցւոյ մը մէջ քաղու տալու ժամանակը՝ խօսքը Կ. Պօլսոյ ազգային լրագրաց վերայ դառնով՝ անոնք ստախոս են և փոքր։ Գումար դարձող մը համար անգամ կը զննեն անհիմն զոյցներ տարածելու, ըսել է։ Դողդիւրեան մէջէն մէկը ելեր պոռագներ է թէ արժան չէ այդպիսի խօսքեր զրուցել եկեղեցւոյ մէջ և այլն։ Լայս պատճառաւ, ըստ աստութեան Մահալ, մազմնացեր է որ Պատրիարքը մէջ պիտի խաղայ եղեր, եթէ բարեբաղդաբար Մատուոյ մատը զինքը չաղատէր։ Վսեմ լրագիրները ազգին վարժապետներն են, կը յուսելու Մահալ, և անոնց ձեռքէն ազատուի չկայ, մանաւանդ Պատրիարքի մը համար։ Իսկի, բայց եթէ ազգը ելլէ և հարցնէ մեզ թէ՝ «Ի՞նչ է ձեր վարժապետութեան վկայականը և որո՞յ իշխանութեամբ վարժապետ կարգուած էք մեր վերայ։ Թուրքիոյ ընդ պիտի խաղցնէք զնա, ու ձեր ընտրած դատաւորներով պիտի դատէք և պիտի դատապարտէք զՆորին Սրբազնութիւնը։ Դի կայոց զանգ իշխան և դատաւոր ի վերայ նորա և զի կայոց զանգ երեսփոխան և փոխանորդ դաւառական Հայոց, որոց թիւը երկու միլիոնի կը հասնի, մինչդեռ դուք այսինքն Կ. Պօլսոյ Հայք 203,000 հոգի չկայք, իսկ համարեք ձեր հազիւ թէ 200 հոգի կը գտնուին»։ Եթէ այսպիսի հար-

կրենք իրենց գերեզմանատան պատ քաշելով աստուածուցեցին, նոյնպէս և մենք պարտիմք մեր տեղերը աստուածուցնել մեր պատերը քաշելով, ուրեմն Լատինք ո՞ր իրաւամբ մեր գերեզմանատան վրայ դուռ կը ձգեն, և ան ալ երկու դուռը մէկն են, ասոր ո՞ր օրէնքը կընեն։ Ի՞նչ սիրտ կարէ տոկալ, եթէ Լատինք կուզեն մեր գերեզմանատան մէջն անցու դարձ ընել ըստ առաջնոյն, ուրեմն թող քակեն իրենց գերեզմանատան նոր շինած պատերը, և առաջին կերպարանքը մտնայ դորձը, ինչպէս էր պատ չքաշած առեւն։ Եթէ իմ կրնայ իրենց անցու դարձը շարունակել մեր գերեզմանատան մէջն, դարձեալ երբեք չենք արգիլել, ո՞չ մենք և ո՞չ Յոյնք։

«Ներկորդ խնդրոյն վրայ ևս, ձեր խառնակութիւնը և անհիմնական տեղեկութիւնը քաղեցինք, ըսաւ Ն. Վսեմութիւնը, և հասկցուեցաւ ինչ ըլլաւ։ Կիմա կը մնայ երրորդ խնդրոյն վրայը ևս ձեր տալիք պատասխանները իմանալու տեսնել թէ անոր մէջ ևս ինչ գողանք կայ որ այսքան խոթողութեամբ քննարկեաներուն և երբեք չէք զննիր անոնց խնդրոյն։

«Ներկորդ խնդրոյն, ըսաւ սրբազան Պատրիարքը, բոլորովին պարզ և ամենայայտնի է, երբ անապատալս մտածեմք և քննեմք. հետեւապէս իրենց ըսածներուն բոլորովին սուտ ըլլալը ինքնին կը յայտնուի։ Սակայն կա զգաւմ, վսեմա՞ն։ Տէր, որ նոյն երրորդ խնդրոյն վրայը լատինաց պաշանջմունքները շնորհք ընէ տեղն ի տեղը ձեր բերնովը ըսել ինձ. վսեմա՞ն Լատինք մտք սլալ ինչ կը խորհին միշտ, և բերնով այլ ինչ կը խօսին, ինչպէս քանիցս անգամ փորձը տեսնուեցաւ։

«Նորին Վսեմութիւնը դարձեալ լատինաց բերած նոյն գերեզմանատան յատակագիծին վրայ մատը դնելով՝ ըսաւ. «Լատինք կըսեն թէ՛ մենք արգիլն միշտ Հայոց գերեզմանատան մէջն կանցնէինք կը խառնայինք իր-

ցում մի ըլլայ լրագրապետաց ինչ պատասխան պիտի տան Հարկաւ պատասխանը պատասխանը են այն լրագիրները, որոց մէկը վարժապետ և միւսը վարդապետ կանուանէ Լեւոնի՝ զհրապարակական թերթերը որոնք զՀայրիկը երկինքը հանելով յայս ժողովրդեան, Պատրիարք կարգեր են զնա

Լհաւասիկ վերոյիշեալ յօդուածը։

ՔԱՐԹ

Ինչպէս որ յայտնի է, Խաչատուր սուրբ Խաչ եկեղեցւոյ թաղական խորհուրդը ազգային միապետական իշխանութեան կողմէն ոչ միայն կախալայեալ, այլ կատարելապէս քիմիական աղի պէս լուծեալ և ցլեանս ընտրելիութեան իրաւունքէն զրկուած էր։

Մեր վրայ թաղեցին կրակ կտրած և առ Բաղաքական ժողովն բողոքած էր, սահմանադրութեան չափազանց զործածութեան և իրենց իրաւանց յափշտակութեան դէմ։

Լայս կրակը՝ երթալով պատրիարքարանի բռնապետական սաստկաշունչ հողմին պատահելով, հետզհետէ արծարծեցաւ, և հարկ եղաւ որ Խրիմեան Հայրիկը այդ անմարելի բոցը մարելու համար քանի մը թուրումնաւ ջուր զարնէ։ Լայսինքն՝ այս կիրակի քարոզ մը խօսեր է, բայց դժբաղդաբար ջուրի տեղ Բէրթալի կողմէ գործածուած ըլլալուն, հրեհը աւելի արծարծեց է և մազ մնացեր է որ սրբազան Պատրիարքն ալ մէջ պիտի խաղայ եղեր, եթէ բարեբաղդաբար Մատուոյ մատը զինքը չաղատէր։

Մահալ Խրիմեանի վրայ խօսած առեւ միշտ զգուշութեամբ գրել զործածած է, վսեմա՞ն զԽրիմեան սրտանց կըսիրէ. սակայն անապատութիւնը իրմէ աւելի կըսիրէ. այս պատճառաւ, նա մանաւանդ այս պիտի պաշտօնական անպատեհութեան մը վրայ լուր պիտի քող ծածկելու իր նշանաբանին դէմ ըլլալով, չկրնար երկու տող բան չգրել ինչու որ, հակադարձը խօսելով, եթէ օր մը, Մատուած չընէ Խրիմեան Հայրը ելլէ գիտութեամբ կամ անգիտութեամբ ի հայր ազգին պակասութիւն մը գործէ, (ինչպէս որ այս օրերս այսպիսի պակասութիւն մը գործելու վրա տանդին մէջն է՝ ներկայ միապետական իշխանութեան գործիք ըլլալով) Խրիմեան ըլլալուն համար չհրապարակելու և զինքը չզոգուեցնելու ենք։ Լայս չենք կրնար ընել. շատ շատ մեր իրեն ընելիք ծառայութիւնը իրեն յիշեցնել մը պիտի ըլլայ որ՝ հիմա ինքը առջին Խրիմեանը չէ, պատրիարքութեան բարձր պաշտօնը՝ զինքը թէպէտ կամաց կամաց, բայց զգալի կերպով փոխած է։

Հայրիկը մեր այս գրածներուն վրայ երբեք սըրտէ։

Հասարակ պոլոտոսցեն, (այսինքն՝ քարիք—իլ ամ) և զոր հաւ նշանակած են իրենց յատակագիծին մէջ, ըսելով յոյց տուաւ այն հասարակի քաղաւած սեղծը, որ կը ցուցնէր նոյն ճանապարհին անգը՝ որ Հայոց գերեզմանատան մէջէն կանցնէր։

«Այս, հիմա նոյն գծին տեղը ճանապարհ կայ, վսեմ. Տէր, ըսաւ սրբազան Պատրիարքը, բայց ասիկայ շատ ժամանակ չէ որ զանցաւորութեամբ թող տրուած է ճանապարհ ըլլալու, և քանի որ երեք ազգաց գերեզմանատուներն ալ պատ չընէին, ի հարկէ ոչ թէ մէկ տեղէ, այլ ամեն կողմէ ճանապարհէր թէ մեր թէ՛ Յունաց և թէ՛ Լատինաց գերեզմանատուները, որուն կարծիք չկայ երբեք։ Եւ նոյն գծին տեղին համար Լատինք որ կը պնդեն թէ ճանապարհ է, բոլորովին սուտ է. և երբեք անկէջ օրինաւոր ճանապարհ եղած չէ և չկրնար ըլլալ»։

Նորին Վսեմութիւնն ըսաւ. «Դուք կըսէք թէ նոյն տեղը ճանապարհ չէր, և չէ. բայց Լատինք կըսեն թէ՛ ճանապարհ է, և ճանապարհ ըլլալուն յայտնի նշաններն ալ մին այն է որ կըսեն թէ, դեռ նոյն ճանապարհին յատակաքարերը (զաւորներ) տեղ տեղ կը քանդուին, զորս Հայք չեն կրնար ուրանալ։—Ուրեմն յատակաքարերուն համար ինչ կրնար ըսել, և ասիցս աւելի հաստատուն փաստ ի՞նչ կրնայ ըլլալ, եթէ իրաւ են նոյն յատակաքարերն, ուրեմն իրաւունք ունին Լատինք ճանապարհ է ըսելու և հետեւապէս դուռ ալ բանալու։

«Նոյն իսկ իրենց յատակաքար կարծած քարերն են, ըսաւ սրբազան Պատրիարքն, որք յայտնապէս կըստուգեն ոչ թէ միայն ճանապարհ չըլլալը, այլ և նոյն քարերուն տակը իսկ գերեզման ըլլալը, վսեմա՞ն Լատինաց յատակաքար կարծելով վկայ բերած քարերն իսկ պիտի ստուգեն թէ իրենց տակը մարդ կայ թաղուած։

(Պիտի շարունակուի։)

